ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 44. ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1

Վառնաները հետևյալն էին.

Բրահմաներ՝ *քրմեր,*

Քշատրիներ՝ *ռազմիկներ,*

Վայշիներ՝ *գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ,*

Շուդրաներ՝ *մերժվածներ, թշվառներ, ամոթալի աշխատանքով զբաղվողներ:*

Հուպտաների օրոք բրահմանների և քշատրիների վառնաները վերածվեցին քրմական և զինվորական դասերի: Նրանց ձեռքում էր կենտրոնացած պետական իշխանությունը: Նրանք նաև խոշոր հողատերեր էին: ***Երկրում ձևավորվում էր ավատատիրական կարգը:***

Երկրի հողատարածքների մեծ մասը պետության սեփականությունն էր, որի մի մասը տնօրինում էին ***գյուղական համայնքները***: Համայնքներում արտադրում էին այն ամենը, ինչ պետք էր գյուղացուն՝ մթերք, աշխատանքային գործիքներ, հագուստեղեն և այլն: Արհեստավորներին պահելու համար համայնքը առանձնացնում էր բերքի մի մասը:

Գյուղացիների վճարած հիմնական հարկը ***բահրան*** էր, որը նրանց ստացած բերքի կեսն էր: Բացի դրանից՝ նրանք պարտավոր էին տարբեր պարհակներ կատարել՝ աշխատել ճանապարհների, կամուրջների, ջրանցքների կառուցման կամ վերանորոգման վրա, կատարել այլ աշխատանքներ:

2

Սուլթանները իրենց մերձավորներին, մզկիթներին, տաճարներին երբեմն կալվածքներ էին նվիրում՝ որպես ***ժառանգական սեփականություն***: Վարելահողերը, անտառները, արոտավայրերը, խոշոր ջրանցքները համարվում էին պետության սեփականությունը:

Պետության և ավատատերերի հիմնական եկամուտը ստացվում էր պետական և մասնավոր հողերի վրա ապրող ու աշխատող

գյուղական համայնքներից: Եկամտի մեկ այլ կարևոր աղբյուր էին քաղաքները: Քաղաքային արհեստավորները տարատեսակ հարկեր էին վճարում պետությանը: Նրանց արտադրանքը ծառայում էր հիմնականում արքունիքի, ավատատերերի և բանակի կարիքները սպասարկելուն: Ներքին առևտուրը մեծ դեր չուներ, իսկ արտաքին առևտուրը զարգացած էր որոշ ծովափնյա քաղաքներում:

2

Հնդկաստանի ծովափնյա քաղաքների մարդաշատ շուկաներում վաճառվում էին տեղական և ներմուծված ապրանքներ: Գործվածքներ, համեմունքներ, ներկանյութեր, ոսկերչական իրեր գնելու համար վաճառականներ էին գալիս Չինաստանից, Աֆրիկայից և Արաբիայից: Հնդկաստանի հետ առևտրում գերիշխում էին արաբ վաճառականները, որոնք հնդկական նավահանգիստներում ունեին իրենց թաղամասերը:

Հնդիկ արհեստավորները փառաբանված էին իրենց վարպետությամբ: Ոսկերիչները ոսկուց և արծաթից պատրաստում էին նուրբ, գեղեցիկ ամանեղեն, կարողանում էին լավ հղկել թանկարժեք քարերը: Բարձր էին գնահատվում փղոսկրից և փայտի արժեքավոր տեսակներից նրանց պատրաստած արձանիկները: Իզուր չէ, որ Արևելքի ժողովուրդների հեքիաթներում Հնդկաստանը պատկերվում էր որպես անհամար գանձերի երկիր: